ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 27 » դեկտեմբերի 2023 թվականի N: 612 -Ա ք.Գյումրի

«ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ՆՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԸ, «ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ, ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՎԻՃԱՐԿՎՈՂ) ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ,«ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ՄԻԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, «ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, «ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՎԵԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1651-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված դրույթների, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-66-րդ հոդվածների, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 24-րդ, 25-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ **Ընդլայնվող ընկերություն**) և «ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ **Միացող ընկերություն**) միջև կնքված միացման պայմանագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Ընդլայնվող ընկերության հաշվեկշիռը 2023 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հաստատել Միացող ընկերության հաշվեկշիռը 2023 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Սահմանել Ընդլայնվող ընկերության կողմից տեղաբաշխված 43,118 (քառասուներեք հազար մեկ հարյուր տասնութ) հատ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) ոչ փաստաթղթային բաժնետոմսերի շուկայական արժեքը 2023 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ յուրաքանչյուրը՝ 119,000 (մեկ հարյուր տասնինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ զուտ ակտիվների արժեքը՝ 5,128,449,308(հինգ միլիարդ մեկ հարյուր քսանութ միլիոն չորս հարյուր քառասունինը հազար երեք հարյուր ութ) ՀՀ դրամ:

5. Սահմանել Միացող ընկերության կողմից տեղաբաշխված 20 (քսան) հատ 14,446,100 (տասնչորս միլիոն չորս հարյուր քառասունվեց հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) ոչ փաստաթղթային բաժնետոմսերի շուկայական արժեքը 2023 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ յուրաքանչյուրը՝ 35,105,000 (երեսունհինգ միլիոն մեկ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ, իսկ զուտ ակտիվների արժեքը՝ 700,716,115 (յոթ հարյուր միլիոն յոթ հարյուր տասնվեց հազար մեկ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:

6. Հաստատել Միացող ընկերության և Ընդլայնվող ընկերության միացման միջոցով վերակազմակերպման հետևյալ կարգն ու պայմանները.

Միացող ընկերությունը Ընդլայնվող ընկերության հետ միացման ձևով վերակազմակերպումից հետո մեկամսյա ժամկետում Միացող ընկերության կողմից կազմված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի որոշմամբ հաստատված փոխանցման ակտի համաձայն՝ անձնում է, իսկ Ընդլայնվող ընկերությունն ընդունում է Միացող ընկերության առկա հիմնական և շրջանառու միջոցները, դրամական մնացորդները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, հաշվարկները: Հանձնում-ընդունումը կատարվում է համապատասխան ակտի միջոցով, որոնք ստորագրվում են կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

Միացող ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսերը փոխարկվում են Ընդլայնվող ընկերության բաժնետոմսերի առանց ձևի և սեփականատիրոջ փոփոխության՝ սույն որոշման 8-րդ կետում սահմանված փոխարկման կարգի համաձայն և բաժնետերերի ռեեստրում համապատասխան գրանցում կատարելու միջոցով:

Միացող ընկերությունը միացման ձևով վերակազմակերպված է համարվում նրա գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից:

7. Հաստատել Միացող ընկերության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների՝ Ընդլայնվող ընկերությանը փոխանցման ակտը՝ համաձայն N 4 հավելվածի:

8. Հաստատել սույն որոշմամբ պայմանավորված Ընկերության կանոնադրության փոփոխությունը համաձայն՝ N 5 հավելվածի:

9. Հիմք ընդունելով Միացող ընկերության և Ընդլայնվող ընկերության միջև կնքված միացման պայմանագիրը՝ սահմանել ընկերությունների կողմից տեղաբաշխված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի հետևյալ փոխարկման կարգը.

Միացող ընկերության տեղաբաշխված թվով 20 (քսան) հատ 14,446,100 (տասնչորս միլիոն չորս հարյուր քառասունվեց հազար մեկ հարյուր)ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) ոչ փաստաթղթային բաժնետոմսերը փոխարկվում են Ընդլայնվող ընկերության $ՇԱ_2$*Ք/$ՇԱ_1$ հատ 100,000 (հարյուր հազար)

ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ բաժնետոմսերի, որտեղ տերմիններն ունեն սույն որոշման N 1 հավելվածով հաստատված միացման պայմանագրի 2.2 կետում նշված իմաստը:

10. Հիմք ընդունելով միացման պայմանագրի 2.2 կետում շարադրված Ընդլայնվող ընկերության կանոնադրական կապիտալի հաշվարկման բանաձևը՝ սահմանել, որ Ընդլայնվող ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 4,901,800,000 (չորս միլիարդ ինը հարյուր մեկ միլիոն ութ հարյուրհազար) ՀՀ դրամ, որը կազմում է 49,018 (քառասունինը հազար տասնութ) հատ 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր և հաստատել Ընդլայնվող ընկերության կանոնադրության փոփոխությունը համաձայն հավելվածի:

11. Հանձնարարել Ընդլայնվող ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Իսահակյանին և Միացող ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Գևորգյանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ ընկերությունների միացման ճանապարհով վերակազմակերպման պետական գրանցման համար:

12. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Լեյլի Ասլանյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է